ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1990 դեկտեմբերի 3-ին թուրքական հեռուստատեսության (TRT-1) «32-րդ օր» ամսական ծրագրով հեռասփռվեց թուրք հայտնի լրագրող Մեհմեդ Ալի Բիրանդի հարցազրույցը Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական հարաբերությունների նախարար Եսայի Ստեփանյանի հետ, հայ-թուրք հետագա հարաբերությունների մասին նրա ունեցած պատկերացումների շուրջ: Այդ պահից սկսած ծայր առավ սուր բանավեճ սփյուռքահայ եւ տեղական մամուլի էջերում, տարագան հավաքներում, ...հիմնարկներում ու տներում: Խստորեն քննադատվեց նախարար Ե. Ստեփանյանը:

Անշուշտ, Թուրքիայի հետ հայկական պետականության ունենալիք հարաբերությունների մասին վեճն սկսվել էր շատ ավելի վաղ, դեռեւս 1989-ին, երբ մամուլում թե այլուր եղան ելույթներ Հայոց համազգային շարժման տեսաբանների եւ այլոց կողմից, իսկ հետագայում՝ արդեն Հայաստանի Նորաստեղծ խորհրդարանում՝ հռչակագրի համապատասխան հոդվածի առթիվ բանավեճերի ընթացքում: Ու տակավին՝ շատ ավելի վաղ, 20-30-ական թվականներին, երբ Հայաստանի հանրապետության այն ժամանակվա վարչապետներից Ալ. Խատիսյանը Պոլսում մեղադրում էր արեւմտահայերին, թե չեն կարողացել լեզու գտնել «չենտլմեն թուրքերի հետ», նաեւ հետագայում, երբ արդեն վտարանդի դարձած դաշնակցական ղեկավարներից ոմանք, Ռուբեն Դարբինյանի գլխավորությամբ, ներկայացնում էին, այսպես կոչված, «թուրքական օրիենտացիան» եւ հավաքվել էին, Դրոյի ղեկավարությամբ, «Պրոմեթեոսյան ուխտի» շուրջը:

Սակայն այս եւ հարակից հարցերի մասին՝ հետագայում:

Մինչ այդ՝ կողքի սյունակներում ներկայացնում ենք թուրքական մամուլի արձագանքները Հայաստանի Հանրապետության քաղաքական նոր նախաձեռնության կապակցությամբ:

ԲԻՐԱՆԴԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ Ե. ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ

ԲԻՐԱՆԴ - Հնում մեզ հետ բարեկամ չէիք, այժմ ի՞նչ պատահեց, ի՞նչն է փոխվել, որ սերտանալ եք ուզում: Տնտեսական դժվարությունների մեջ եք ընկել, դրա համա՞ր եք ցանկանում համագործակցել մեզ հետ:

ՍՏԵՓԱՆՅԱՆ - Ես կարող եմ պատասխանել՝ ոչ, որովհետեւ մենք անկախության առաջին քայլերն արել ենք մի քանի ամիս առաջ: Մեր հիմնական քաղաքականությունն է՝ այսուհետեւ կապի մեջ մտնել ոչ միայն Մոսկվայի, այլ նաեւ ողջ աշխարհի երկրների հետ: Նախապատվությունը ցանկանում ենք տալ հարեւան երկրներին: Նախատեսում ենք կիրառել իրատեսական քաղաքականություն: Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ ոչ մի կապ գոյություն չունի: Մենք ցանկանում ենք սկիզբ դնել այդ հարաբերություններին: Թուրքիայի հետ համագործակցելով՝ մեր նպատակը խանութները լցնել ու տնտեսական բոլոր հիմնահարցերը լուծելը չէ: Եթե նման նպատակ ունենայինք, ապա առաջին հերթին կդիմեինք Ամերիկային, Ֆրանսիային, նման այլ երկրների եւ սփյուռքահայությանը: Այդ դեպքում մենք ավելի շուտ արդյունքի կհասնեինք: Հետեւաբար, Թուրքիային մոտենալու պատճառը տնտեսական դժվարությունները չեն:

Մ.Ա.Բ.-Կոնկրետ ի՞նչ սպասելիքներ ունեք Թուրքիայից, ուզում եք զարկ տալ սահմանամերձ առեւտրի՞ն, թե՞ այլ ծրագիր ունեք:

Ե.Ս.-Պետք է ասել, որ տնտեսության բնագավառում մեզ համար կարեւոր հարց է լուրջ հարաբերությունների մեջ մտնելը, եւ դա մենք կարող ենք անել:

Այդ գործին կարող ենք լծվել երկաթուղու միջոցով: Հնարավոր է ավելացնել գոյություն ունեցող գծի կարողությունը: Դա օգտակար կլինի նաեւ Թուրքիայի համար: Այդ ճանապարհը կարող է վերածվել կենսական ուղու: Կարող ենք օգտվել նաեւ սահմանամերձ առեւտրի հնարավորությունից, ապրանքների փոխանակությունից: Մենք պատրաստ ենք մասնակցելու ԽՍՀՄ-ի եւ Թուրքիայի միջեւ 1989թ. ստորագրված պայմանագրին: Սահմանային անցուղիներին մեծ կարեւորություն ենք տալիս, կարելի է ազատ թողնել մարդկանց երթուդարձը: Օրինակ, բացել Մարգարայի սահմանային ուղեկալը:

Մ.Ա.Բ.- Հարգելի նախարար, անկախ մեր կամքից, տարօրինակ իրավիճակ է ստեղծվում: Խորհրդարանում մի որոշ ժամանակ առաջ չեղյալ համարեցիք Թուրքիայի եւ Հայաստանի, ինչպես նաեւ ձեր եւ Ադրբեջանի միջեւ սահմանները որոշող Մոսկվայի պայմանագիրը: Մեկ ասում եք, թե Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ սահմանը չեք ճանաչում, մեկ էլ Թուրքիայի նկատմամբ պահանջներ եք ներկայացնում: Ամենուրեք զգացվում է, որ միջազգային արշավ է տարվում այդ ուղղությամբ: Այդքանից հետո էլ մեզ առաջարկում եք համագործակցել եւ ոտք դնել նոր ժամանակաշրջան: Դա ինչպե՞ս եք պատկերացնում:

Ե.Ս.- Եթե ես հիմա ասեմ, որ ամեն ինչ կվերջանա եւ կփոխվի, ճիշտ չեմ լինի: Ժողովրդավարության պայմաններում յուրաքանչյուր ոք իրավունք ունի սեփական կարծիք ունենալ եւ այն մեկնաբանել: Մեր խորհրդարանում գտնվող տարբեր ուժերին եւ սփյուռքում գործող տարբեր կազմակերպություններին չենք կարող ասել եւ ստիպել, որ պետք է որդեգրեն այս կամ այն քաղաքականությունը: Ես այստեղ կարող եմ խոսել միայն ի՛մ կառավարության անունից: Մենք չենք կարող խառնվել այլոց գործերին: Կառավարության տեսակետը շատ պարզ է. կարելի է համագործակցել նույնիսկ գոյություն ունեցող տարաձայնությունների առկայությամբ:

Մ.Ա.Բ.- Այսինքն՝ ուզում եք ասել, որ մի կողմից համագործակցությունը շարունակվելու է, մյուս կողմից սեղանի տակից մեկս մյուսին աքացի ենք տալու, այո՞: Այդպե՞ս պետք է հասկանալ:

Ե.Ս.- Ես կարող եմ ասել, որ կառավարությունը սեղանի մոտ է նստած եւ հարցերը քննարկում է բացահայտ կերպով: Սակայն սեղանի տակ էլ կարող են ուրիշ ուժեր լինել: Դրանք կարող են լինել թե ձեր կողմից, եւ թե մեր: Սակայն դրանք կառավարության ոտքերը չեն լինի:

Մ.Ա.Բ.- Արդյոք վերջ կդրվե՞ն արշավներին, մեղադրանքներին, պահանջներին: Ավելի ճիշտ՝ Թուրքիայի նկատմամբ մինչեւ օրս Հայաստանի Հանրապետության ունեցած թշնամական կեցվածքը կփոխվի՞ արդյոք:

Ե.Ս.- Դա կախում ունի այն երկու երկրների դիրքորոշումից, ովքեր պատճառ են դարձել հարցերի ծագմանը: Պետք է հասկանանք, որ երկու երկրների միջեւ բարեկամությունը երկու կողմերի համար էլ օգտակար կլինի: Եթե Թուրքիան պատրաստ է եւ կըմբռնի այդ, ապա կարող եմ ասել, որ մենք նոր ժամանակաշրջան ենք ոտք դնում: Իմ կարծիքով, մենք մեր կողմից մեզ տված առաջին քայլն արել ենք: Դիվանագիտական միջոցներով հայտնել ենք, որ ցանկանում ենք Թուրքիայի հետ կապի մեջ մտնել: Այժմ սպասում ենք Թուրքիայի պատասխանին: Նախ պետք է կապը հաստատվի, որպեսզի որոշվի հարաբերությունների բնույթը:

Մ.Ա.Բ.- Դա վերին աստիճանի կարեւոր որոշում է: Անշուշտ՝ այդ որոշումը ընդդիմադիրներ կունենա եւ ներսում, եւ դրսում: Դրանք չե՞ն խանգարի որոշման իրագործմանը:

Ե.Ս.- Պետք է ասել, որ ցանկացած քաղաքականության մեջ եւ հատկապես շրջադարձային կետերում, դիմադրության ճակատ անպայման լինում է: Այժմ էլ կա: Մեզ համար կարեւորը ներքին ընդդիմադիր ուժն է, քանի որ մեր հանրապետության գոյությունը եւ կեցվածքը դրանով է պայմանավորված: Ինչ վերաբերում է սփյուռքին, ապա մինչեւ այսօր այն լրիվ խորությամբ ուսումնասիրված չէ: Հնարավորություն չունեինք: Առաջիկա փետրվարին մենք Հայաստան ենք հրավիրել աշխարհի բոլոր հայ համայնքները ներկայացնող կազմակերպությունների ղեկավարներին եւ գործարար մարդկանց: Այդ ժամանակ մենք Երեւանում հնարավորություն կունենանք ծանոթանալու այս հարցի վերաբերյալ սփյուռքահայության ունեցած կարծիքին: Սակայն նշեմ, որ սփյուռքահայության կարծիքը չի կարող լուրջ ազդեցություն գործել մեր քաղաքականության վրա:

Մ.Ա.Բ.-Դրսի հայությու՞նն է ավելի շատ ազդում ձեզ վրա, թե հակառակը: Սա այնքան էլ պարզ չի հասկացվում:

Ե.Ս.- Ես արդեն ասացի, որ մեր ներկա կառավարությունը Թուրքիայի դեմ քարոզչական արշավ չի ծավալել: Սփյուռքահայությունը մեզ տնտեսական օգնություն է ցույց տալիս եւ հնարավորություն է ստեղծում տարբեր երկրների հետ կապի մեջ մտնելու համար: Երկրաշարժից հետո սփյուռքահայությունն էր, որ ԱՄՆ-ից, Իտալիայից եւ Ֆրանսիայից եկող օգնությունը կազմակերպեց: Մենք սփյուռքին չենք կարող ղեկավարել եւ ազդել նրա վրա: Սփյուռքը բազմակողմանի եւ բազմիմաստ ու հետաքրքրական մի երեւույթ է: Գործնականում դա հնարավոր չէ: Սխալ են այն պնդումները, որ իբր սփյուռքն է մեզ ղեկավարում: Մենք իշխանության գլուխ կանգնեցինք դեմոկրատական ընտրությունների շնորհիվ: Դրսից եկող հրահանգներին մենք չենք ենթարկվում: Ոչ ոք չի կարող մեզ վրա ազդել: Մենք պատրաստ ենք Թուրքիայի հետ առեւտրական, զբոսաշրջային եւ քաղաքական հարաբերությունների մեջ մտնել:

Մ.Ա.Բ.- Շատ բարի, այս բոլորը շատ լավ է: Սակայն մինչեւ այսօր, ուղիղ 15 տարվա ընթացքում 40 անմեղ թուրք դիվանագետ զոհվեց: Նրանց սպանողներն էլ հայեր էին եւ կամ հանդես էին գալիս հայերի անունից: Ուզում եմ ձեզ հարցնել, դուք որպես Հայաստանի Հանրապետություն, դատապարտու՞մ եք ահաբեկչական այդ արարքները, թե՞ ընդունում եք: Գուցե համակրա՞նք եք տածում այդ երեւույթի նկատմամբ:

Ե.Ս.- Ես անձամբ դատապարտում եմ ահաբեկչությունը: Դրան ուրիշ ավելացնելու խոսք չունեմ: Ոչ մի քաղաքակիրթ պետություն չի արդարացնում ահաբեկչությունը: Այն հակամարդկային երեւույթ է: Մեր կառավարությունը այն չի ընդունում եւ չի դիտում որպես որեւէ հարցի լուծման միջոց: Վերջին 15 տարվա ընթացքում տեղի ունեցածների համար ցավում եմ: Ով էլ արած լինի դա, հայերը թե ուրիշները, մենք այն դատապարտում ենք եւ դեմ ենք դրան:

Մ.Ա.Բ.- Հարգելի նախարար, Թուրքիայի հետ պատմական պնդումների վրա հիմնված շատ պատմական հիմնահարցեր ունեք: Նույնը Ադրբեջանի հետ: Նրանցից էլ հողային պահանջներ ունեք: Այսուհանդերձ, ձեր գրաված աշխարհագրական դիրքի հետեւանքով ստիպված եք ապրելու թուրքական գործոնի առկայությամբ: Իրոք, դուք պետք է կարողանա՞ք այդ բոլոր տարաձայնությունները սրբել, անցյալը մեկ կողմ դնել եւ, նոր էջ բացելով՝ գործակցել թուրքական այս գործոնի հետ, թե՞ այս բոլորը միայն անուրջներ են:

Ե.Ս.- Վերջից գամ, եթե ինձ թույլ կտաք: Ոչ, դա անուրջ կամ երազանք չէ: Ընդհակառակը, սա ճշմարտություն է: Աշխարհը շատ է փոխվել: Այսօր արդեն անցյալում միմյանց թշնամի եւ հակառակորդ երկրները կարողանում են սեղանի շուրջ նստել եւ բանակցությունների միջոցով իրենց հարցերը լուծել: Մենք էլ, երբ դրա հերթը գա, կարող ենք մի սեղանի շուրջ նստել եւ, ընդհուպ մինչեւ պատմական հարցերը, քննարկել ու ընդհանուր արդյունքի հասնել: Ես համոզված եմ, որ երկրները պետք է իրար հետ բարեկամաբար ապրեն: Ողջ աշխարհում պետք է վերջ տալ հարեւան երկրների միջեւ գոյություն ունեցող թշնամանքներին, եւ բոլոր երկրների ժողովուրդները 2000 թիվը պետք է ոտք դնեն որպես համերաշխ ընտանիք:

ՓՈԽՆԱԽԱՐԱՐ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԿԱՐԱՅՈՒՄ

Սփյուռք կոչվածը հայերի եւ թուրքերի միջեւ գոյություն ունեցող հարցերի հետեւանքն է:

Հայաստանը պահպանում է Թուրքիայի հետ իր սահմանները:

Անցյալ դեկտեմբերի 19-ին Անկարայի մեջ գումարված Սեւծովյան երկրների բարօրության եւ տնտեսական համագործակցության ժողովի ավարտից հետո, թուրք լրագրողի կողմից Հայաստանի փոխ արտաքին գործոց նախարար Աշոտ Եղիազարյանին ուղղված այն հարցին, թե Հայաստանը ցանկանու՞մ է փոխել 1921 թ. Մոսկվայի համաձայնությամբ ճշտված սահմանները, հայ պաշտոնատարը պատասխանել է՝ ասելով, թե այս խնդրի մեջ թյուրիմացություն կա. «Ճիշտ է, Հայաստանի Խորհրդարանում մի քանի պատգամավորներ կանգ առան թուրք եւ հայկական սահմանները բարեփոխելու հարցի վրա, ասել է Եղիազարյանը, բայց Խորհրդարանը այդպիսի որոշում չի քվեարկել: Այսինքն, Հայաստանի կառավարությունը որեւէ պաշտոնական հայտարարություն չի արել, թե չի ճանաչում այժմյան սահմանները: Քանի դեռ այդպիսի որոշում եւ հայտարարություն չկա, նշանակում է այժմյան սահմանները ուժի մեջ են»: Եղիազարյանն ավելացրել է, թե հայերը պահպանում են Թուրքիայի հետ իրենց ունեցած սահմանները:

Անկարայի մեջ բացված վերը նշված ժողովին առայժմ մասնակցում են չորս երկրներ՝ Թուրքիան, Ռումինիան, Բուլղարիան եւ Խ. Միությունը:

Խորհրդային պատվիրակությունը ներկայացնում էին վեց հանրապետություններ, այդ թվում Հայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանը: Հայաստանը ներկայացնում էր փոխ արտաքին նախարար Աշոտ Եղիազարյանը, Ադրբեջանը՝ արտաքին նախարար Հուսեյն Սադըղը:

Ժողովի նպատակն էր դեպի Սեւ ծով ելք ունեցող կամ դրան մերձավոր երկրների միջեւ Ընդհանուր շուկայի օրինակով համագործակցություն ստեղծել ոչ միայն Սեւ ծովի փոխադրական հնարավորություններից օգտվելու, այլ նաեւ այդ երկրների միջեւ հաշտության եւ բարեկամության կապեր հաստատելու համար:

Ըստ «Հուրիեթ» թերթի, ժողովին առընթեր հայ-ազերի բարձր մակարդակի հանդիպում է կայացել:

Թուրքերի համար ամենանշանակալիցը Հայաստանի ներկայացուցչի մասնակցությունն Թուրք լրագրողների զանազան հարցերի Աշոտ Եղիազարյանն պատասխանել է.

«Հանրապետությունները այսուհետեւ կարող են անկախ քաղաքականություն վարել թե ներքին, թե արտաքին հարցերում: Օրինակի համար, որեւէ հանրապետություն, որ մասնակցում է Սեւծովյան համագումարին, կարող է հրաժարվել այս ծրագրին մասնակցելու իր սկզբնական որոշումից: Սակայն մենք շատ հետաքրքրական ենք գտնում Թուրքիայի ծրագիրը: Այս ծրագիրը տնտեսական տեսակետից բազմաթիվ երկրների համար շահավետ է: Այն լավ է նաեւ միջազգային համագործակցության համար: Մենք գտնում ենք, որ այս ծրագիրը հրավեր է իրականացնելու համար Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ տնտեսական գործակցություն»:

Պատասխանելով Լեռնային Ղարաբաղի առնչությամբ ուղղված հարցերին, Աշոտ Եղիազարյանն ասել է, թե այս հարցը օրակարգի խնդիր դարձավ վերակառուցման քաղաքականության շնորհիվ: Ղարաբաղի հայերը տեսան, որ պետք է սրբագրվեն անցյալում գործված սխալներն ու պատմական անարդարությունները: Դրա համար էլ նրանք որոշեցին անկախություն եւ ինքնավարություն հայտարարել: Այս հարցը ուղղակի կերպով կապ չունի Հայաստանի հետ: Խորհրդային զինվորները այս խնդրում ադրբեջանցիների կողմն են բռնում: Հայերը զենք են վերցրել պարզապես ինքնապաշտպանվելու համար:

Եղիազարյանն ավելացրել է, թե Հայաստանը ջանում է լուծել այս անբնական կացությունը: Ղարաբաղի խնդիրը բացասական ազդեցություն է գործել Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունների վրա: Ինչ վերաբերում է հայկական ահաբեկչական արարքներին եւ Ամերիկայի հայկական լոբբիի աշխատանքներին, Եղիազարյանը հայտարարում է, թե այս ամենը արձագանք է 70 տարի առաջ պատահած ցավալի դեպքերի: «Հայերը, որ ցրվեցին աշխարհով մեկ, շատ են տառապել, հայերի այս զգայնությունը շատ բնական է: Այս հարցի մասին ես Մոսկվայի ձեր դեսպանի հետ եմ խոսել: Թուրքերի եւ հայերի միջեւ հար-ցեր կան: Սփյուռք կոչվածը ինքը դրա հետեւանք է: Մեզ հրավիրել է թուրքական կողմը: Սրանից առաջ ոչ պաշտոնական շփումներ ենք ունեցել: Թող երկխոսություն սկսվի մեր միջեւ: Նստենք ու միասնաբար քննենք այս հարցերը: Սեւծովյան համագործակցության ծրագիրը կարող է նախաքայլ լինել դրա համար: Մենք էլ Մոսկվայի ձեր դեսպանին ենք հրավիրել»,- ասել է Եղիազարյանը:

ԻՆՉՈՒ՞ Է ԹՈՒՐՔԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՈՒՌԸ ԳՆՈՒՄ

«Գյունեշ» թերթն իր անցյալ դեկտեմբերի 6-ի համարում հակադրվում է Հայաստանի կողմից Թուրքիայի հետ համագործակցություն հաստատելու ուղղությամբ կատարված առաջարկին: Թերթը գրում է, թե որոշ շրջանակներ հակազդել են ավագ դեսպան Վոլքան Վուրալի Հայաստան այցելելու որոշման վրա: Այս շրջանակները նկատել են տալիս, թե քանի դեռ Հայաստանը չի հրաժարվել թուրքերի դեմ իր թշնամական կեցվածքից, հայերի հետ ցանկացած հարաբերություն, բացի թուրքերի նկատմամբ առավել թշնամանք հրահրելուց, այլ բանի չպիտի ծառայի:

«Գյունեշը» այս կապակցությամբ հարցումներ է ուղղել արտաքին նախարարության բանբեր Մուրադ Սունգարին, որը պատասխանել է երկու օր ուշացումով: Սունգարն ասել է, թե սկզբունքորեն Թուրքիան դեմ չէ Հայաստանի հետ տնտեսական համագործակցությանը: «Թուրքիան կողմնակից է իր բոլոր հարեւանների հետ հարաբերություններ հաստատելուն, որոնք հիմնված պիտի լինեն միմյանց ներքին գործերին չմիջամտելու, միմյանց հողային ամբողջականությունը հարգելու եւ փոխադարձ բարյացակամության սկզբունքների վրա: Թուրքիան ակընկալում է, որ հարեւաններն էլ նույն սկզբունքները որդեգրեն», ասել է Մուրադ Սունգարը:

Այս պայմաններում, շարունակել է նա, Վոլքան Վուրալի Հայաստան այցելելն էլ կարող է բնական դիտվել:

Նախկին դեսպան եւ հրապարակախոս ՋՈՇՔՈՒՆ ՔԸՐՋԱՆ, որը դրանից առաջ Հայաստանի կողմից արված առաջարկի դեմ սուր հոդված էր գրել, այս անգամ նույնպես հակադրվել է տնտեսական հարաբերությունների հաստատմանը եւ ասել է հետեւյալը.

«Սա ի՞նչ տեսակ դիվանագիտություն է: Ինչու՞ է Թուրքիան Հայաստանի դուռը գնում: Հայերը նախ թող հայտարարեն, թե հրաժարվում են հողային պահանջներից: Մենք ինչու՞ ենք նրանց մոտ դեսպան ուղարկում, մինչդեռ նրանք հայտնում են, թե իրենց են վերապահում նախկին կարծիքները: Սա մեծ խայտառակություն է»: Արեւմտյան մամուլը նույնպես Հայաստան այցելությունը մեկնաբանում է որպես ցեղասպանության պնդումների ճանաչում:

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ

«Երբ հայերը տնտեսական հարաբերություններ են պահանջում, ասել է Ջոշքուն Քըրջան, ուրիշ միջոցներ կան նրանց նպատակները քննելու համար: Նրանք Թուրքիա են գալիս եւ տեսակցություններ են ունենում ոչ թե մեր քաղաքագետների հետ, այլ գործարար մարդկանց, առեւտրական պալատի վարիչների հետ: Թուրքիան էլ նայում եւ քննում նրանց նպատակները: Առանց այսպիսի նախաքայլի դեսպան ուղարկել Հայաստան՝ նշանակում է նվեր տալ հայերին»:

Քըրջան ասել է, թե երկրների միջեւ անկարելի է տնտեսական հարաբերություններ ստեղծել առանց լուծելու նրանց միջեւ եղած հարցերը: Սրա լավագույն օրինակը Դավոսի համաձայնությունն է:

Այնուհետեւ նա շարունակել է.

«Եթե միայն Ադրբեջանի տնտեսական բոյկոտը այսքան խղճալի վիճակի է մատնել Հայաստանին, ապա ի՞նչ պիտի լինի նրա՛ վիճակը, եթե Թուրքիայի հետ էլ վատ հարաբերություններ ունենա: Անկասկած է, որ հայերը մեր կարիքն ունեն: Նրանք ցանկանում են Թուրքիայի վրայով Արեւմուտք հասնել: Ուրեմն իրենք թող մտածեն այդ մասին, ոչ թե մենք»:

Միջին Արեւելքի Տեխնիկական համալսարանի պատմության ամբիոնի դասախոս Եուլուղ Թեքին Կուրաթը այսպես է արտահայտվել.

«Եթե իսկապես Հայաստանը ցանկանում է համագործակցություն, նախ թող հայտարարի, թե Թուրքիայից հողային պահանջ չունի, իսկ ամերիկյան կոնգրեսն էլ ետ առնի Հայկական բանաձեւը: Հայաստանն իր անկախության հռչակագրում Թուրքիայի մասին խոսելիս օգտագործել է «Արեւմտյան Հայաստան» արտահայտությունը եւ կրկնել Ղարաբաղի մասին իր հողային պահանջները: Լեւոն Տեր-Պետրոսյանն Ամերիկայում տնտեսական հարաբերություններ է առաջարկել «Թուրքիայի հետ քաղաքական տարակարծությունները վերապահելու պայմանով»: Նույն տրամադրությունն է արտահայտել «32-րդ օր» ծրագրով խոսող հայ նախարարը (խոսքը Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների նախարար Եսայի Ստեփանյանի մասին է: - խմբ.): Այսպիսի պայմաններում Վոլքան Վուրալը Հայաստան պիտի՝ այցելի: Նաեւ՝ նախագահ Օզալի հրահանգով:

Ջոշքուն Քըրջան ասել է, թե ոչ ոք չի ցանկանում ոտնակոխ անել Հայաստանին, բայց կան պայմաններ, որ պիտի հարգվեն, որպեսզի Թուրքիան Հայաստանին արտոնի Սեւ ծովի վրայով Արեւմուտք դուրս գա: 1) Հայաստանը պետք է հրաժարվի Ղարաբաղը պահանջել: 2) Հայաստանը պետք է հայտնի, թե ճանաչում է Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ ստորագրված համաձայնագրերը: 3) Հայաստանը ոչ մի քարոզչություն չպիտի անի Թուրքիայի եւ Ադրբեջանի դեմ:

ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆԱՆՈՑ ԹՇՎԱՌ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԷ, ՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՊԻՏԻ ԹԵԼԱԴՐԻ

«Թերջյուման» թերթում ԹԱՀԱ ԱՔՅՈԼԸ հրատարակել է մի խմբագրական՝ «Հայկական բարեկամություն» խորագրով: Հոդվածագիրը հիշեցնում՝ է «32-րդ օր» ծրագրով մեջտեղ հանված հարցը, հիշեցնում նաեւ, թե հայերը բացեիբաց հայտնում են, թե մնում են ցեղասպանության մասին իրենց կարծիքին, այս բոլորից հետո շարունակում վերլուծել Հայաստանի վերջին իրադարձությունները: Հայերը վերջերս քննիչ հանձնախումբ են կազմել, որպեսզի քննեն այժմյան սահմանների վավերականությունը: Երեսփոխան Վիկտոր Համբարձումյանը Գորբաչովի աչքերի մեջ նայելով գոչել է, որ «Կարսը, Արդահանը եւ Տրապիզոնը հայկական հողեր էին»:

Հայերը պիտի մնան իրենց այս կարծիքին, սփյուռքահայերն իրենց դրամական ամբողջ ուժը Թուրքիայի հողերի վրայով պիտի հոսեցնեն դեպի Հայաստան, իսկ մենք տնտեսական համագործակցություն պիտի ստեղծենք, Մարգարայի դուռը բացենք, արեւմտյան ընկերություններն էլ համատեղ ներդրումներ անեն Հայաստանում:

Հայերը այս պայմաններն են առաջ քաշում:

Այնուհետեւ հոդվածագիրը շարունակում է.

«Մինչդեռ երեք միլիոնանոց թշվառ Հայաստանը չէ, որ պիտի պայմաններ թելադրի, այլ 60 միլիոնանոց զարգացած Թուրքիան: Հայաստանը փակ երկիր է՝ շրջապատված Թուրքիայի, Ադրբեջանի եւ Վրաստանի կողմից, ելք չունի դեպի ծով եւ այս երեք երկրների հետ էլ կռիվ ունի: Վրացիների հետ՝ հողային տարակարծություն, ազերիների հետ էլ Ղարաբաղի հարց: Տասը հազարանոց հայ գաղտնի բանակը շարունակում է հարձակվել ազերիների վրա: 300 հազար ազերիներ էլ ահաբեկչությամբ եւ ցեղասպանությամբ հեռացել են Հայաստանից»:

Հոդվածագիրը այդ պայմանները թվելուց հետո հարց է տալիս, թե Թուրքիան պիտի մոռանա՞ հայոց պնդումները, պիտի կարողանա՞ տարբեր մերձեցում ունենալ սփյուռքի հայության նկատմամբ, վերջապես պիտի կարողանա՞ կանաչ լույս վառել Հայաստանի առջեւ:

«ԹՈՒՐՔԻԱՆ ՈՉԻՆՉ ՉԻ ԿՈՐՑՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՎ»

Լուրջ պետությունները զգացմունքներով չեն առաջնորդվում: Ամեն ինչից առաջ իրենց շահերին են հետեւում: Իրենց քաղաքականությունը չեն անշարժացնում՝ անցյալի մնացած դեպքերի եւ կաղապարային պատկերացումների վրա հիմնվելով: Մանավանդ այսօրվա աշխարհում, ուր ամեն ինչ արագորեն փոխվում է, հնարավոր չէ խուսափել տաբուները վերացնելուց եւ նոր հարաբերություններ չհիմնել:

Լուրջ պետությունների համար միմյանց հետ հարաբերություն հաստատելու, իրար վրա ազդեցություն գործելու երկու ձեւեր կան. երկխոսություն եւ տնտեսական համագործակցություն:

Որ պետության հետ որ երկխոսություն եւ տնտեսական հարաբերություն հաստատեք, դրա վրա ձեր ազդեցությունը կուժեղանա: Եթե հակառակը մտածեք, եթե ամեն տեսակ հարաբերությունից եւ երկխոսությունից խուսափեք, այդ երկրի վրա որեւէ ազդեցություն չեք կարող ունենալ: Մինչդեռ մի երկիր, որ ձեզ հետ հարաբերություններ ունի, ձեզ թշնամություն անելու դեպքում պարտավոր է երկու անգամ մտածել եւ լավ հաշվել, թե ինչեր պիտի կորցնի այդ քայլին դիմելով:

Ոմանք կարող են մտածել այսպես. «Ինչու՞ հարստացնենք Հայաստանը, որ պատմության առաջին օրից ի վեր անհանգստացրել է շրջանի բոլոր թուրք տարրերին: Նա եթե ոտքի կանգնի, կարող է դարձյալ վերադառնալ իր հին քաղաքականությանը: Ին-չու՞ օգնենք, որ ուժեղանա»:

Մենք կարծում ենք, որ Թուրքիան, Հայաստանի հետ համագործակցելով, ոչինչ չի կորցնում, ընդհակառակը՝ շահում է:

1. Ամեն ինչից առաջ, կա մի կողմից 55 միլիոնանոց հսկա պետություն, մյուս կողմից երեք միլիոնանոց մի փոքրիկ երկիր, որի ուժեղանալը երկար ժամանակ է պահանջում: Թուրքիան ֆիզիկապես որեւէ վախ չի կարող ունենալ Հայաստանից: Ընդհակառակը՝ Հայաստանը պիտի վախենա այսպիսի համագործակցությունից: Հենց որ Հայաստանի ճանապարհը սկսի Թուրքիայով անցնել, հենց որ Թուրքիան մատակարարի Հայաստանի էլեկտրականության մի մասը, անխուսափելի կամուրջ դառնա դեպի Եվրոպա եւ Ամերիկա ու սահմանային առեւտրով ապահովի Հայաստանի կարիքները, հասարակական ներդրումներով նպաստի Հայաստանի տնտեսական վերելքին, այն ավելի ուժեղ խաղաքարտեր կունենա Հայաստանի հանդեպ:

2. Այս ձեւով Թուրքիան իր կշիռը առավել չափով զգացնել կտա Կովկասյան շրջանի վրա: Թուրքիան եթե Հայաստանի հետ համագործակցություն հաստատի, Խորհրդային Միության եւ Արեւմուտքի համար կդառնա մի երկիր, որի խոսքը կարեւորություն ունի:

3. Թուրքիայի արեւելյան շրջաններն էլ իրենց բաժինը պիտի ստանան տնտեսական այս համագործակցությունից:

4. Հենց որ Թուրքիան տնտեսապես համագործակցի Հայաստանի հետ, դժվար կլինի Ամերիկյան կոնգրեսում, Ընդհանուր շուկայում կամ ՄԱԿ-ում «ցեղասպանության» կնիքը խարանել Թուրքիայի ճակատին:

Այս բոլորի փոխարեն Հայաստանի խաղաքարտերը բացասական են: Հայաստանը մեծ ազդեցություն չունի: Եթե կա մի երկիր, որ անպայման պետք է վախենա եւ թշնամություն անելուց առաջ պիտի երկու անգամ մտածի, դա ոչ թե Թուրքիան է, այլ՝ Հայաստանը:

Հայաստանի կառավարությունն էլ գիտի այդ բոլորը եւ, հակառակ դրան, ուզում է համագործակցել Թուրքիայի հետ: Բոլորովին անտրամաբանական են մեր մտավախությունները:

Կան մի քանի պայմաններ, որոնցով հնարավոր կլինի հաստատել առողջ համագործակցություն:

Նախ հարկավոր է ունենալ լայն մտածող եւ մեր հեռահար շահերը լավ հաշվող դիվանագիտություն: Պետք չէ, որ ամեն մեկը ձայնը գլուխը գցի. ներքին նախարարությունն ու ՄԻԹ-ը (Թուրքիայի անվտանգության ծառայություն.- խմբ.) թշնամի, արտաքին նախարարությունն էլ՝ «նոր գտնված հարեւան» տեսնի ի դեմս Հայաստանի: Բոլորն էլ, խոհեմ, զգուշավոր քայլեր պիտի անեն, առանց անմիջական լուծումներ ակնկալելու:

Ինչպես որ մենք չենք կարող մոռանալ մեր Գալիպ Բալքարներին ու Իսմայիլ Էրեզներին, որոնց կորցրինք հայկական ահաբեկչության պատճառով, նրանցից էլ չենք կարող սպասել, որ փոխեն իրենց կարծիքներն ու հրաժարվեն ցեղասպանության պնդումներից:

Չպետք է իրար հետ շփոթել Սփյուռքն ու Հայաստանը: Չպետք է ակնկալել, որ Սփյուռքը անմիջապես դադարեցնի հայկական քարոզչությունը, իսկ նրա արածների համար հաշիվ պահանջել Հայաստանի հանրապետությունից:

Որպես վերջին կետ, չպետք է մոռանանք, որ Թուրքիան մեծ պետություն է եւ չի կարող վախենալ այսպիսի համագործակցությունից:

Խելացի, հավասարակշիռ եւ համբերատար քաղաքականությամբ կարող ենք բացել մի նոր շրջան: Պետք է վստահ լինել այս հավանականությանը:

Գոնե այս առիթը չպետք է փախցնենք՝ պարզունակ հաշիվներին զոհ գնալով:

ՄԵՀՄԵԴ ԱԼԻ ԲԻՐԱՆԴ
«Միլլիեթ», 4 դեկտեմբերի 1990թ.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ՀՐԱԺԱՐՎԻ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ, ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ, ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻՑ ՈՒՆԵՑԱԾ ԻՐ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ

«Թերջյուման» թերթը իր 1990 թ. դեկտեմբերի 7-ի համարում գրում է, թե Մուդրոսի համաձայնությունը թուրքերի երկու հայրենիքներում նույն հետեւանքների ծնունդ տվեց: Թուրքական բանակը ստիպված եղավ նահանջել Բաքվից եւ Ադրբեջանը ենթարկվեց նախ անգլիացիների, ապա բոլշեւիկների հարձակմանը: Թուրքիան նույնպես, բացի կենտրոնական Անատոլիայից, գրեթե ամբողջությամբ նվաճվեց:

Այնպիսի մի խավար շրջանում, երբ տակավին չէինք տարել Ինոնուի հաղթանակն իսկ, Մուստաֆա Քեմալ փաշան գաղտնի հրամանագիր ուղարկեց Քյազիմ Կարաբեքիր փաշային, որպեսզի այն փոխանցվի բոլոր թուրք ներկայացուցիչներին: Հրամանագիրը կրում էր 1920-ի դեկտեմբերի 1-ի թվականը:

Թուրքիայի ազգային արտաքին քաղաքականության համար այնքան կարեւոր այս հրամանագրի չորս հոդվածներից մեկը հետեւյալն էր.

«Կովկասի սահմանների եւ հաղորդակցության տեսակետից բոլոր խնդիրները պետք է լուծվեն՝ միշտ առաջնահերթ կարեւորություն տալով Ադրբեջանի եւ Հյուսիսային Կովկասի շահերին: Պետք է ջանանք ոչնչացնել ռուսների եւ հայերի միջեւ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված համաձայնության այն հոդվածները, որոնք դեմ են Ադրբեջանի շահերին: Եթե ամեն ազգ իր ճակատագրի տերն է, ուրեմն ամեն ինչ պիտի անենք, որպեսզի Ղարաբաղի նման թրքաբնակ վայրերը կցվեն Ադրբեջանին»:

1921-ին Կարսի համաձայնության ընթացքում էլ որոշվեց, որ Նախիջեւանը կցվի Ադրբեջանին: Այդ համաձայնությունը Խորհրդային Հայաստանի անունով ստորագրեցին արտաքին գործերի կոմիսար Ասքանազ Մռավյանը եւ ներքին գործերի կոմիսար Պողոս Մակինցյանը:

Այս պատմական փաստաթղթերի լույսի տակ պետք է արժեւորել հայերի այսօրվա ձգտումները: Հայերն ուզում են առնել Ղարաբաղն ու Նախիջեւանը: Սա լարվածություն առաջացրեց Հայաստանի եւ Ադրբեջանի հարաբերություններում: Սփյուռքահայ լոբբիները արշավանք սկսեցին Թուրքիայի եւ Ադրբեջանի դեմ: Լեւոն Տեր-Պետրոսյանի նախագահությամբ կազմված Հայաստանի խորհրդարանը պատրաստվում է անվավեր հռչակել թուրք-հայկական սահմանները, որոնք վերոհիշյալ համաձայնությամբ ճշտված էին:

Ակնհայտ է, որ այն իրավունքները, որ հայերն ուզում են իրենց վերապահել Թուրքիայի հետ համագործակցելով հանդերձ, վնասում են թե Թուրքիայի, թե Նախիջեւանի հարցի վրա Թուրքիայի ունեցած խոսքի իրավունքին:

Մինչդեռ Թուրքիան միշտ ցանկացել է ապահով լինել Կովկասի նման ռազմավարական կարեւոր վայրից իր անվտանգության հարցում:

Մնում է, որ եթե Հայաստանի հետ առեւտուր պիտի անենք ասելով՝ անտեսենք մեր ազգի եղբայրներին, սրանք պիտի կարծեն, թե թուրքերը իրենց դաշունահարում են թիկունքից:

Թուրքիան երեք միլիոնանոց Հայաստանի հետ առեւտուր անելու պատրվակի տակ չի կարող դավաճանել 70 միլիոնանոց թուրք հավաքականությանը:

Ուրեմն անպայման պետք է մերժե՞նք Հայաստանի տնտեսական համագործակցության առաջարկը:

Այսպիսի առեւտուրը կարող է մեզ համար շահ ապահովել: Այդ ձեւով կպառակտվի հայերի հանրային կարծիքը եւ ոմանք մեր նկատմամբ կարող են մեղմանալ: Դրանից զատ, Սփյուռքը այսպիսի առեւտրի դեմ է: Թուրքիան Հայաստանի եւ Սփյուռքի այս տարակարծությունից կարող է օգտվել լոբբիական շրջանակներում: Սակայն սրանք անպատեհությունների կողքին շատ քիչ առավելություններ են:

Թուրքիան հստակ կերպով պետք է հայտնի, որ մի շարք պայմաններ է դնում: Նա պետք է խուսափի Վոլքան Վուրալին Հայաստան ուղարկելով այնպիսի տպավորություն առաջացնելուց, թե մեծ ախորժակ ունի նման համագործակցության մեջ, ընդհակառակը՝ պետք է սառը վերաբերմունք ցույց տա եւ սպասի, թե հայերը ինչպիսի նոր քայլեր կանեն:

Մեր պայմանները հետեւյալները կարող են լինել.

1. Հայաստանի խորհրդարանը պետք է հայտարարի, թե ճանաչում է միջազգային համաձայնություններով ճշտված սահմանները, Հայաստանը պետք է հրաժարվի ուրեմն Թուրքիայից, Նախիջեւանից, Ղարաբաղից եւ Վրաստանից իր հողային պահանջներից, լուծարքի սահմանային հարցերի քննության հանձնախումբը, ցրի հայ զինյալ բանակը եւ ընդունի Հայաստանից վտարված ազերիներին:

2. Առավելագույն զիջողությունը, որ Թուրքիան կարող է անել ցեղասպանության հարցում, հետեւյալն է. առնվազն պետք է հայտարարվի, որ ցեղասպանության պնդումը պատմական-ակադեմիական խնդիր է, այսօրվա համար քաղաքական որեւէ նշանակություն չունի, եւ այդ ուղղությամբ Թուրքիայի դեմ քարոզչություն չպիտի արվի:

Եթե Հայաստանն այս պայմանները չընդունի, այդ դեպքում Սփյուռքը, եթե կարող է, թող գա ու կշտացնի նրան:

Թուրքիան, որ 1920 թ. այնքան տկար լինելով հանդերձ, կարողացավ ազգային քաղաքականություն մշակել, հիմա շատ ավելի է զորացել եւ չի կարող դաշունահարել ազերի թուրքերի եւ իր սեփական ապահովությունը: